Co-funded by the European Union

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Co-funded and implemented by the Council of Europe

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԾՐԱԳԻՐ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Ծրագիրը նպատակ ունի աջակցել Հայաստանում կոռուպցիայի, փողերի լվացման և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի հետագա բարելավմանը, ինչպես նաև ապահովել դրա կիրառման արդյունավետությունը: Ծրագիրը փորձում է ուժեղացնել երկրի՝ կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքար իրականացնող մարմինների կարողությունները, աջակցել կոռուպցիայի դեմ պայքարի նոր մեխանիզմների ներդրմանը և կիրառմանը, ինչպես նաև բարձրացնել կոռուպցիայի դեմ պայքարի և բարեվարքության մասին իրազեկվածությունը:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» համատեղ ծրագրի երրորդ փուլի շրջանակներում՝ 2023-2027 թթ.-ին: Այն հիմնված է տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի նախորդ փուլերի արդյունքների վրա (I փուլ՝ 2015-2018 թթ. և II փուլ՝ 2019-2023 թթ.):

Ո՞ՐՆ Է ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

- Ուժեղացնել հայաստանյան հաստատությունների կարողությունները և բարձրացնել արդյունավետությունը կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարում:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- Արդարադատության նախարարություն և Ներքին գործերի նախարարություն
- Հակակոռուպցիոն կոմիտե
- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
- Քաղաքացիական ծառայության խորհուրդ
- ՀՀ կենտրոնական բանկ
- Ֆինանսական դիտարկումների կենտրոն (Հայաստանի ՖՀՄ)
- Ազգային անվտանգության ծառայություն
- Քաղաքացիական ծառայության գրասենյակ

►Գլխավոր դատախազություն (Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչություն)
► Քննչական կոմիտե
► Դատական իշխանություն
►Քաղաքացիական հասարակություն և հասարակության լայն շրջանակներ

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

► Քաղաքականության/օրենսդրության, կարողությունների զարգացման և իրազեկման՝ նպատակային գործողությունների համակցության միջոցով:

Ի՞նչ արդյունքի ենք ակնկալում հասնել

► Կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման համար օրենսդրական, ռազմավարական և ինստիտուցիոնալ շրջանակների և կարողությունների ուժեղացում:
► Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման, հետաքննության, քրեական հետապնդման և դատաքննության արդյունավետության բարձրացում:
► Ընդլայնված օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակներ և ուժեղացված տեխնիկական կարողություններ՝ փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի և դրանց հետ առնչվող ակտիվների վերականգնման գործում:

Որքա՞ն է ծրագրի բյուջեն

► Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 630,000 եվրո:
► Ընդհանուր բյուջեն կազմում է 19,3 մլն եվրո (80%-ը ֆինանսավորվում է Եվրոպական միության և 20%-ը՝ Եվրոպայի խորհրդի կողմից):

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

► Ծրագրի տևողությունն է 2023 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի փետրվարի 28-ը:

Հավելյալ տեղեկություններ

►Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհրդի Տնտեսական հանցավորության դեմ պայքարի բաժինը՝ Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների և

► Գործընկերություն հանուն լավ կառավարման
Կայք՝ http://partnership-governance-eu.coe.int/
Էլ. փոստ՝ dpc_pgg@coe.int

համագործակցության դեպարտամենտի միջոցով (Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինություն):

- Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
  Կայք՝ https://www.coe.int/yerevan
  Էլ. փոստ՝ coe.yerevan@coe.int

«Գործընկերություն հանուն լավ կառավարման» (ԳԼԿ) ծրագիրը Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ նախաձեռնությունն է՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում լավ կառավարումն ամրապնդելու համար:

ԳԼԿ-ն տրամադրում է նպատակային աջակցություն Արևելյան գործընկերության երկրներին՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում իրենց օրենսդրությունն ու պրակտիկան եվրոպական չափանիշներին մոտեցնելու համար: Այն աջակցում է, մասնավորապես, Արևելյան գործընկերության երկրների ներպետական բարեփոխումներին՝ արդարադատության ամրապնդման, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի, հավասարության ապահովման և խտրականության բացառման, կանանց համար արդարադատության հասանելիության խթանման և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի նպատակով: